

կարեաց զգլուխ նորա, եւ չողաւ Սահակ եւ կոտորեաց զբազումս ի Տաճկաց, եւ Քուրտանքն պատեալ էին զբերդն Սահակայ, եւ նա դարձեալ ի կոտորածէն՝ եզիտ պաշարեալ գրտուն իւր եւ կոտորեաց զնոսա, եւ սակաւք ի նոցանէ զերծեալք եկին առ Թէոփիլոս այսու պատճառաւ: Եւ այն Տաճիկքն որ ընդ Քուրտանսն զնացին, եւ նոքա հաւատացեալ էին ի Մահազի, որ երբեմն ասէր՝ Թէ ես եմ Քրիստոսն, եւ երբեմն՝ Թէ ես եմ Հոգին սուրբ. եւ այնպէս հայէին ի նա՝ որպէս լսէին ի նմանէ»⁽⁴⁾:

Միքայէլ Ասորիի ծանօթութեանց համաձայն՝ Սուրբաթի այս աղանդաւորները իրենց աղանդին խառնած են նաեւ ինչ ինչ քրիստոնէական տուեալներ:

Բարակ ըստ երեւոյթի 817ին աղանդաւորներուն զլուխ կ'անցնի: Սիստ ու արիւնայից աղանդապետ մը, որ ահագին վրնասներ կը պատճառէ Ատրպատականի եւ Արեւելեան Հայաստանի: Ժամանակ մը լուրջ սպառնալիք կ'ըլլայ նոյնիսկ Պաղտատի Սալիֆայութեան վեհապետութեան:

Միքայէլ Ասորի կը վկայէ Թէ Բարակ Հայաստանի ինչ ինչ մասերուն վրայ արչաւած է: «Եւ զնաց Մահազի եւ արար զընակութիւն իւր ի բերինս Արարողայ յաշխարհն Հայոց»⁽⁵⁾: Թուական չի տար Մահազիի (Բարակի) Հայաստանի վրայ կատարած այս արչաւանքներուն մասին. սակայն Մովսէս Կաղանկատուացի շատ աւելի մանրամասնութիւններ կու տայ 821 թուականին: «Ի նոյն ամի ասպատակեաց Սեւաղայ՝ աշխարհաւերն Տաճիկ, որոյ Աւարանչան անուն ճանաչէր, ի սահմանս Հայոց. եւ յաւարի առեալ զաշխարհն ամենայն՝ զառնայ ի Սիւնիս, եւ ամբանայ ի բերդատեղի աւանին Շաղատու, որ է ի գաւառին Ծղկաց: Եւ Վասակ Սիւնեաց տէր ամեալ զԲարան ի Պարսից՝ եհար ըզնոսա եւ արար փախտտական. եւ Սիւնեաց

տէրն ի նմին ամի վախճանեցաւ, եւ հառ Բարան զընուտրն Վասակայ Սիւնեաց տեառն ի կնութիւն: Եւ ի նոյն ամի տէր Ներսէս ի փղիպեան՝ սպան զՎարազ Տըրդատ ի Ստեփանոսեան, եւ զորդի նորին ի մօրն զոգ զենին եւ զամենայն ստացուածս նորա յափշտակեցին: . . . Յետ այսորիկ անհրամանակատար եղեւ գաւառն Բաղաց՝ յանօրէն Բարանայ. եւ ել նա ի Պարսից եւ հառ աւերեաց զերկիրն եւ ի սուր սուրբի ձարկ զկանայս եւ զմանկունս Բաղաց: Եւ անտի ի միւս տարին հանց Բարան ի գաւառն Գեղարքունի եւ ձարկ ի սուր զընակիչսն ոգիս իբրեւ տասն եւ հինգ հազարս. եւ զմեծ Մաքենացւոց մայրաքաղաքն այրեաց, մնաց միայն ջըրաղացն եւ այլ ոչ ինչ. եւ էր Թիւ Հայոց երկու հարիւր եօթանասուն եւ վեց (827): Եւ յետ երկուց ամաց եհար Բարան զՏաւուսին եւ հալածական արար անձինս իբրու հարիւր եւ յիսուն հազար: Եւ ի միւս սում տարին եհար Բարան զԱրրահիմ զորդին Ղեթայ: Ի նմին ամի գաւառանողքն ի սէր եւ ի խաղաղութիւն, որոց անուանք Գաւոն եւ Շապուհ ճանաչէր, սպանին զՍտեփաննոս զկոչեցեալն Աբլասաղ, որ էածն զԲարան եւ եհար զԲաղացիսն, որ ի սուր նիղակաց կոտորեցին զԲերձոր գաւառ եւ գաւանսն Զուռեաց՝ զԿաննակաչ, զՀակարի եւ զՏափատ: Եւ դարձեալ ասպրտամբքն ի Բարանայ զիմադարձ պատերազմաւ ամբացան ի բերդն Գորոզու, կախալ զգաւառն ամս տասն եւ երկու, որք ան այսօրիկ՝ Վերին Վայկունիք, Բերձոր, Սիսական, Հարանդ, Ամարաս, Պաղկանք, Մխանք, եւ Տրի գաւառ: . . . Եւ ի նոյն ամին հանց Բարան զգետովն Երասխ ի Պարսից, եւ յԱմարաս գաւառ բնակեցաւ. բան խաղաղութեան սկսաւ խօսել, զի ի հնազանդութիւն նմա եկեսցեն, եւ ժամադիւտ զզմամբ ոմանք հնազանդեցան եւ յետոյ գաւեալ անհնազանդ եղին: Անտի դարձեալ Բարանայ յերկիր իւր ի

(4) Անդ, էջ 364-365:

(5) Անդ, էջ 364: